

## ԿՐՕՆԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԿԵՆԴՍՆԻ ՀՍՑ

Ես եմ հացն կենդանի յեկեղեցի իջեալ

Յովհ. Զ. 51

(Փոխադրուրիւն Նաումանից)

Մեր հացը դաշտումն է բուսնում: Հողի լաւութիւնը, սերմի տեսակը, երկրագործի աշխատասիրութիւնը, եղանակի յաջողութիւնը, բոլորը միասին իրենց նշանակութիւնն ունին, հատիկները շտեմարանը լցնելու, ջրաղացում աղալու և սեղանի վերայ հաց դնելու համար: Հացի համար աղօթում են հազարաւոր մարդիկ. «զհաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր»: Կեանքի առաջին կարիքը հացն է. ուր հաց չկայ, այնտեղ է և թշուառութիւնը, ուստի և քրիստոնեայի պարտքը պիտի լինի իւր կողմից հոգալ, որ ամէն տան հաց լինի: Բայց և այնպէս ճշմարտութիւն է «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ» խօսքը: Մենք հոգևոր, ներքին սննդի կարիք ևս ունինք, եթէ ներքուստ ճնշուած չենք և եղծուած:

Ի՞նչ է իսկապէս հոգևոր սնունդը: Գրքերն են: Կարող էր այդպէս թուալ. բայց հարիւր հազարաւոր գրքեր կան, որ սնունդ չեն տալիս, որովհետև միայն խօսքեր, հայեացքներ, մասնաւորութիւններ, յարդ, փրփուր կամ աղ են տալիս, բայց ոչ հաց: Նրանց մէջ ճշմարիտ և կենսատու գաղափարներ չկան: Եւ որտեղից գրքերը կենսատու կարող են լինել, երբ հեղինակները իրենց սովորների մէջ ծուծ չունին, թուղթն այն ժամանակ միայն կեանք է տալիս, երբ սրտի արիւնով է գրուած. սառն աշխատանքը ջերմութիւն տալ չի կարող: Հոգևոր սնունդ կարելի է

ստանալ միայն կենսագործող, վճիտ հայեացքների և ջերմ զգացումների տէր անձնաւորութիւններից: Նորա են միայն հոգու հացը: Ուր զօրեղ, ներքուստ առողջ անձնաւորութիւներ կան, այնտեղ յագեցած է և շրջապատը: Համարձակ անձը մեծ յաղթութիւն է տանում, որովհետև իւր շրջապատի հազարաւորներին խրախոյս է ներշնչում: Սորա ոյժ են ստանում նրա հաստատութիւնից և իրենք էլ հաստատուն դառնում:

Այդ պատճառով էլ Յիսուս չէ ասում, թէ ես կեանքի հացն եմ բերում: Նա շատ աւելի տպաւորիչ և պարզ է խօսում, «ես եմ կենդանի հացը»: Նա իւր ամբողջ էութեամբ, մտածութեամբ և գործով հոգևոր անունդ է մարդկութեան համար: Նորան յաջորդող սերունդները նրանից են կերակրուում: Երբ մարդիկ չափազանց յագեցած են աշխարհի վայելչութեամբ և խորտիկներով՝ թախճանքով դէպի կենդանի հացն դառնում, որ միշտ թարմ է և պարզ դարերի ընթացքում: Եթէ նորա հոգևոր քաղց ունին և ի զուր են բաղխել փիլիսոփաների և երազողների դոճերը, ապա երեխաների նման դալիս են միայն հաց և հաց խնդրում: Յիսուս օրուայ մեծութիւն ու հերոս չէ արմաւենու նոր պսակներով, այլ մեր հոգևոր կեանքի անձնաւորեալ հիմքը: Ուրիշները ուրիշ կերպ են ներգործել, իսկ նա կենդանի հացն է:

Յայտնի է այն հրաշալի պատմութիւնը, թէ ինչպէս Յիսուս մի քիչ հագով հինգ հազար հոգի կերակրեց և նոյն իսկ կողովներով փշրանքներ աւելացան: Այդ պատմութիւնը մի օրինակ կարող է լինել, թէ ինչ է նա հոգևոր կեանքի համար: Նա իւր հացը բեկանում է և բաժանում բազմացեղ մարդկանց, բազմազան դարերի ընթացքում: Նա բեկանում է մեր հայրերի և մեզ համար, բայց պաշարը դեռ չէ սպառուած: Յիսուսի անձնաւորութեան հոգևոր բովանդակութիւնը անսպառ է: Նա ապրել է բոլոր ժամանակների համար: Եթէ նոյն իսկ մենք մտածէինք, թէ նորան կատարելապէս ըմբռնել ենք, այլ ևս ոչ մի դազանիք չի մնացել նորա մէջ, դարձեալ նրա

փշրանքները կմնային, որով դարերը սնունդ ստանալ կարող են: Բոլոր զօրեղ հոգիները իրենց ժամանակն ունին, բայց նա կենդանի է իւր ժամանակից դուրս: Նա մասնա կից է Աստուծոյ յաւիտենականութեան, որովհետեւ նորա ներգործութիւնը չի պակասում: Այսօր ևս ամէն տեղ նա իւր ծանօթ և անծանօթ աշակերտներն ու աշակերտուհիներն ունի, որոնք դաւանում են նրան ասելով: Մենք թափառում ենք անապատի մէջ, իսկ դու մեր մանանան ես, դու երկնքից իջած հացն ես:

Գ. Վ. Յովսէփեան

\*\*\*

### ԳՍՐՁԵԱԼ ԳԻՒՂԱԿԱՆ ՔՍՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Համ. «Արարատ» 1907 Նոյեմբեր և Դեկ.)

Գիւղական քահանաների նիւթական դրութեան մասին ամեն ինչ ասած չենք լինի, մինչև չպարզենք այն պատճառները, որոնք ստեղծել են նիւթական վարձատրութեան այդպիսի վնասակար ձև:

Առհասարակ երբ արտաքին միջամտութիւն չկայ, երբ մի կողմնակի ուժ չի ազդում իրերի բնական ընթացքի վերայ, ազդեցութիւնը և դիմադրութիւնը, աշխատանքը և վարձատրութիւնը ձգտում են հաւասարակշռուել: Ինչպէս ամեն տեղ, ամեն հանգամանքի մէջ, այնպէս էլ այս բնական օրէնքի հիման վերայ գիւղական քահանաների վարձատրութիւնը նոյն չափը և կերպարանքը ունի՝ ինչ չափ և կերպարանք ունի գիւղական քահանայի արած ծառայութիւնը ժողովրդին: Եւ ճշմարիտ, եթէ խոր սուսնասիրելու լինենք թէ ինչպէս է հասկացւում քահանայական պաշտօնը կամ առաւել ճիշտ արտայայտած ծառայութիւնը գիւղում, կը տեսնենք որ եթէ նրանց ստացած վարձատրութիւնը անորոճ է, ինչպէս շեշտել էինք այդ մասին խօսելիս, դորա համապատասխան պատահական է և քահանայի ծառայութիւնը. եթէ վարձատրութիւնը կասկածելի է, դորա համապատասխան ծառայութիւնն էլ շատ անգամ ոչ անհրաժեշտ. և եթէ վարձատրութիւնը կամայական է,